ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2
«ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»
հիմնադրամի կարիքների համար օդորակիչների գնման ընթացակարգի /այսուհետ նաև՝ Ընթացակարգ/ գնահատող հանձնաժողովի «ՀՊՄՀ-ԷԱՃԱՊՁԲ-22/22» ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի բացման և գնահատման նիստի

ք. Երևան, Տիգրան Մեծի 17 **01 օգոստոսի 2022թ.**
ժամը՝ 10 :30

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ **Մ. Հարությունյան**
Հանձնաժողովի անդամներ՝ **Վ. Մշեցյան, Գ. Վարդանյան**
Հանձնաժողովի քարտուղար՝ **Ս. Ավետիսյան**

1. Տեղեկություն՝ էլեկտրոնային աճուրդի հայտերի բացման և աճուրդը սկսելու վերաբերյալ

Հայտերը բացվել են eauction.armeps.am համակարգի միջոցով /այսուհետ՝ Համակարգ/ 29.07.2022թ.-ին ժամը 10:30-ին:

Էլեկտրոնային աճուրդը սկսվել է հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրը՝ 01.08.2022 թ.-ին ժամը 10:30-ին:

2. Հայտեր ներկայացրած մասնակիցների տվյալները՝ անվանումը, գործունեության հասցեն, կապի միջոցը, էլ.հասցեն

Հ/հ	Մասնակիցների անվանումները	Գործունեության հասցեն	Կապի միջոցներ	Էլ. հասցե
1	Փրիթի Ուեյ ՍՊԸ	ք. Երևան, Ծովակալ Իսակովի 48/1	091 14 14 23	inform@vesta.am

3. Տեղեկություններ հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ ներկայացվելու վերաբերյալ

ՀՊՄՀ-ԷԱՃԱՊՁԲ-22/22 ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ «Գնումների մասին» օրենքով (այսուհետ՝ Օրենք) նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից գնահատող հանձնաժողովի քարտուղարին հիմնավորումներ չեն ներկայացվել:

5. Տեղեկատվություն հրավերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին

Հրավերի վերաբերյալ հարցումներ և պատասխաններ չեն եղել

6.Տեղեկություն հակադարձ աճուրդի արդյունքների վերաբերյալ

Հ/Հ	CPV	Անվանումը	Կազմակերպություն	Մասնակիցների առաջարկված վերջնական գները ԱԱՀ
1	39714230/501	Օդորակիչ	Փրիթի Ուեյ ՍՊԸ	**400000**

Աճուրդն ամփոփվել է 01.08.2022թ. և Համակարգի կողմից 1-ին տեղ զբաղեցրած մասնակից է համարվել՝ ***Փրիթի Ուեյ ՍՊԸ-ն:***

7. Տվյալներ՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված հայտի՝ /հայտում առկա փաստաթղթեր, ինչպես նաև eauction.armeps.am համակարգում մուտքագրված (լրացված) առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագիր/ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու և նիստը կասեցնելու մասին

Առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված հայտը՝ /հայտում առկա փաստաթղթերը, ինչպես նաև eauction.armeps.am համակարգում մուտքագրված (լրացված) առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագիրը/ կազմված էր հրավերով սահմանված պայմաններին համապատասխան:

8. Տվյալներ՝ ընտրված մասնակցի և մերժված հայտի, պայմանագիր կնքելու մասին որոշման, անգործության ժամկետի, պայմանագրի կնքման վերաբերյալ

01.08.2022թ.-ին գնահատող հանձնաժողովը որոշեց՝

8.1 Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 18-ի թիվ 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի 10-րդ կետի 2-րդ ենթակետով՝ ***Փրիթի Ուեյ ՍՊԸ*** կազմակերպությանը հայտարարել որպես ընտրված մասնակից:

8.2 Հաստատել պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարության տեքստը:

8.3 Անգործության ժամկետ է սահմանվում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

8.4 Գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջներով ընտրված մասնակցի հետ կնքել պայմանագիր:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0

Հանձնաժողովի նախագահ՝	_____	Մ. Հարությունյան
անդամներ՝	_____	Վ. Մշեցյան
	_____	Գ. Վարդանյան
Քարտուղար՝	_____	Ս. Ավետիսյան